'ի վերայ գլխաւորաց և բնակչաց գիւղին 'ի Կառավարութենէ և կամ յԱրարատցւոց, մի արկցեն զայն 'ի վերայ վանօրէից, և մի ասասցեն թէ դուք վկայեցիք և առիթ եղէք սորա աքսորանաց. ուստի պարտիք վճարել զտուդանսն։

6°. Մի՛ ոք 'ի գիւղականաց համարձակեսցի ասել եւ պարծիլ այսր և անդր. թէ ունիմք մեք սահմանեալ հաստ 'ի վանօրէից, 'ի միաբանաց և յուխտաւորաց. և մի ոք յանդգնեսցի հակառակիլ վասն այսր, կռուիլ ընդ միաբանս ընդ ուխտաւորս, և հայհոյել նոցա. և կամ քակել զորմն վանօրէից և պարտիզաց նոցին, և զորմն ախռոյն Հայոց. և եթէ համարձակեսցի ոք, տուժեսցէ երաշխաւորն 200 դահեկան։

7°. Ի ճանապարհի չպահանջել յուխտաւորաց զդրամն Ղ-ֆ-ը անուանեալ. չդալ 'ի գիշերի 'ի դրունս վանօրէից և բաղխել զնոսա, պահանջելով զկերակուրս և զայլ իրս. և յոչ բանալ նոցին քարձիդ լինել 'ի ներքս, և այլ սոցին նման անկարգութիւնք, զորս սովոր էին առնել։ Զայսոսիկ 7 գլուխս պայմանս յանձն առին գլխաւոր Շէյխք Բեթղեհէմի, զորս առաջի եդին փոխանորդք երից աղգաց և խոստացան զամենայնն անթերի կատարել սակս խաղաղութեան վանականաց, ուխտաւորաց և ամենայն ժողովրդոց։ Եւ ապա չոքան 'ի դատարան եւ օրինօք Շէրիի հաստատեցին զայն 7 գլուխս պայմանաց, զորս եդին. և դրեցաւ մուրհակ 'ի վերայ գլխաւորաց գիւղին, ١١٣٣ (1720)։

Յետ այնորիկ էառ հրաման Հաննա վարդապետ 'ի Կուսակալէն Դամասկոսի, եւ Նորոգեաց զպարիսպ Ս. Փրկչի վանաց, և ետ դնել 'ի տեղի իւրեանց զանկեալ քարինս։ Նորոգեաց և զմեծ կամարն արեւմտեան, որ 'ի վերայ արտաքին մեծի դրան վանաց Ս. Յակոբայ, եւ զբովանդակ որմն։ Նոյնպէս և զանջրպետ որմն 'ի մէջ վանաց Հայոց և Յունաց, որ 'ի Բեթղեհէմ. զի հնացեալ և խախտեալ էր, և կասկած երկիւղի գողոց և աւազակաց. և ըստ հրամանի Բդեշխին առաւել ամրութեամբ շինեալ բարձրացոյց նաեւ զորմն պարտիզին, եդեալ 'ի նմա դուռն, և զայլ կարեւոր տեղիս վանաց. (1721)։